

Քաղաքականության համառոտագիրը մշակվել է Երիտասարդական ուսումնասիրությունների Ինստիտուտի (ԵՈՒԻ) կողմից՝ «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության մոնիթորինգի և գնահատման» արդյունքների հիման վրա:

Ինչպե՞ս մշակել երիտասարդներին հարմարեցված քաղաքականություն



©Լևոն Արոնյան, Նկարը ՀՀ ՄԵՀՆ

-- Քաղաքական իշխանությունների համար քաղաքականությունը (policy) իրենից ներկայացնում է պետական միջոցների հատկացման/բաշխման մի գործընթաց քաղաքական նպատակներին հասնելու համար:

-- Քաղաքականությունները կարող են իրականացվել օրենսդրության, կանոնակարգի և վարչական ծրագրերի միջոցով:

-- Ժամանակակից կառավարման կառուցվածքներում քաղաքականության ոլորտները հաճախ են խաչվում, հետևաբար կառավարության մի ասպարեզում կատարված որոշումները ազդեցություն ունեն այլ ասպարեզների վրա:

-- Հանրային քաղաքականության խնդիրները համակցված են և փոխկախված¹:


ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն) մշակվել է 2012թ.¹ հիմնվելով Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի և Հայաստանի երիտասարդների ձգտումների և ակնկալիքների համապարփակ ուսումնասիրության վրա: Ըստ ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2015-2025թթ. հայեցակարգի, երիտասարդական պետական քաղաքականությունը ՀՀ պետական քաղաքականության բաղկացուցիչ մասն է և ունի ռազմավարական նշանակություն:

¹ Taking it seriously - Guide to Recommendation CM/Rec(2015)3 of the Committee of Ministers of the Council of Europe to member States on the access of young people from disadvantaged neighbourhoods to social rights (2016), էջ 49

Այսօր Հայաստանում ակտիվորեն խրախուսվում է երիտասարդների մասնակցությունը տարբեր գործընթացներում, նրանց զարգացումն ու ձեռքբերումները: Մական այդ գործընթացների բարելավման ճանապարհին առկա են մի շարք խոչընդոտներ, որոնք անհրաժեշտ է հաղթահարել: Դրանցից հատկանշական է առանձնացնել՝

- Ռազմավարության մշակման և իրականացման գործընթացում երիտասարդների մասնակցության մակարդակի բարձրացումը,
- Երիտասարդական ռազմավարության չափելիության սահմանումը:

Ռազմավարության մշակման և իրականացման գործընթացում երիտասարդների մասնակցության մակարդակի բարձրացումը կամ մասնակցության սանդուղքով² դեպի երիտասարդներին հարմարեցված և չափելի քաղաքականության մշակում



1. Տեղեկատվության տրամադրում գործընթացի վերաբերյալ: Երիտասարդների կարիքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երիտասարդները, ովքեր ներգրավված չեն հասարակական կազմակերպություններում, իրենց ներգրավված և մասնակից չեն զգում ընթացող գործընթացներին:

Առաջարկություն: Անհրաժեշտ է ակտիվացնել քաղաքականության հանրային քննարկումները մարզային համայնքներում՝ ապահովելով հասարակական քաղաքացիական կազմակերպություններում չներգրավված երիտասարդների մասնակցությունը: Դրդել երիտասարդական կառույցներին ավելի շատ աշխատելու քաղաքականության մշակմանը մասնակցելու համար հասանելի միջոցներից գուրիկ երիտասարդների հետ:

2. Խորհրդատվություն: Հետազոտության ժամանակ իրականացված ֆոկուս-խմբային քննարկումների ընթացում երիտասարդները ակտիվորեն արտահայտել են այն միտքը, որ իրենց կարծիքը ոչ մի տեղ հաշվի չի առնվում:

Առաջարկություն: Անհրաժեշտ է մշակել երիտասարդների շրջանում հաշվետվողականության գործող մեխանիզմներ, որոնցով քաղաքականության մշակողները կկարողանան գործընթացի քայլերի մասին տեղեկատվությունը հասանելի դարձնել երիտասարդների համար և ապահովել հետադարձ կապի հնարավորություն:

² Մասնակցության վերոնշյալ 4 աստիճանները հիմնված են Համաշխարհային բանկի սահմանման վրա, աղբյուրը՝ Թադևոսյան Գ.Մ. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը մարզային զարգացման գործընթացներում. մեթոդաբանական խնդիրներ, Եր.ԵՊՀ հրատ., 2008, էջ 20

3. Որոշումների միացյալ ընդունում: Այս փուլում նախատեսվում է մասնակիցներին ընտրելու իրավունք տալ: Միջազգային պրակտիկայում աշխատում է գործողությունների տարբերակների քվեարկության, առավել համապատասխան տարբերակի ընտրության պրակտիկան:

Առաջարկություն: Անհրաժեշտ է նախատեսել քաղաքականության, ռազմավարության քննարկվող գործողությունների հնարավոր տարբերակներ՝ երիտասարդների օգնությամբ՝ իրենց կարիքներին առավել համապատասխանող տարբերակը ընտրելով:

4. Շահառուների կողմից նախաձեռնում և վերահսկողություն: Սա հանդիսանում է մասնակցության առավել առաջադեմ ձևը, քանի որ այստեղ քաղաքացիների մասնակցությունն առավելագույնն է:

Առաջարկություն: Պետական քաղաքականության և ռազմավարության մշակման գործընթացի իրավասությունները, թեպետ, չեն կտորդ ամբողջությամբ փոխանցվել շահառուներին՝ երիտասարդներին, սակայն թափանցիկության մեխանիզմների ապահովումը կարող է լավ հարթակ հանդիսանալ երիտասարդների որպես շահառուների կողմից գործընթացի վերահսկողության գործընթացների մեկնարկի համար:

Երիտասարդական ռազմավարության չափելիության սահմանում



Երիտասարդական ռազմավարության մեջ ներդրված չէ մոնիթորինգի և գնահատման մեխանիզմ, ազդեցության գնահատման հնարավորություն: Դրամաշնորհային համակարգով իրականացվող ծրագրերը մոնիթորինգ անցնում են, բայց, ըստ փորձագետների, չի իրականացվում դրանց արդյունքների գնահատում՝ բացահայտելու

համար, թե արդյոք ծրագիրը հասավ նախանշված արդյունքներին: Չկա ռազմավարության պարբերական գնահատման մեխանիզմ և պատասխանատու

Կիրառելիության համար կարևոր մյուս գործոնը ռազմավարության չափելիությունն է, որի մասին նշվել է բազմաթիվ հետազոտություններում: Ըստ Ռազմավարության մոնիթորինգի և գնահատման բացահայտումների, չափելիության բացակայությունը հանգեցնում է ռազմավարության իրատեսականության և կիրառելիության պակասին, և առանց հստակ ցուցանիշների այն ըստ էության դառնում է ավելի շուտ հայեցակարգային փաստաթուղթ, այլ ոչ թե գործողությունների պլան:

Ցուցանիշների բացակայության պայմաններում ռազմավարության իրականացման արդյունքների մասին դատողություններն անհնար են դառնում: Համապատասխանաբար, ռազմավարության մեջ ներդրված չէ մոնիթորինգի և գնահատման մեխանիզմ, ազդեցության գնահատման հնարավորություն: Դրամաշնորհային համակարգով իրականացվող ծրագրերը մոնիթորինգ անցնում են,

բայց, ըստ փորձագետների, չի իրականացվում դրանց արդյունքների գնահատում՝ բացահայտելու համար, թե արդյոք ծրագիրը հասավ նախանշված արդյունքներին: Չկա ռազմավարության պարբերական գնահատման մեխանիզմ և պատասխանատու:

Առաջարկություն: Միջոցառումների չափելիության ապահովման և ավելի մանրամասն քայլեր մշակելու նպատակով անհրաժեշտ կլինի մշակել մոնիթորինգի պլանը, որտեղ կնշվեն յուրաքանչյուր գործողության հաջողության ցուցանիշները, դրանց ստուգման մեթոդներն ու ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները, կարելի է նշել նաև առկա ռիսկերը: Այնուհետև յուրաքանչյուր գործողության համար կարող է մշակվել գործողությունների պլան, որը կներառի նաև վերահսկման գործողությունները և ռիսկերը կանխարգելելու կամ դրանց ազդեցությունը նվազեցնելու ուղղությամբ քայլերը: Այս պլանը կարող է կազմել տվյալ գործողության համար որպես պատասխանատու սահմանված կառույցը:

Սույն համառոտագիրը մշակվել է Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության աջակցությամբ իրականացված՝ «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության մոնիթորինգի և գնահատման» արդյունքների հիման վրա: